Արձանագրության 3
«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/222» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք.Երևան

27.11.2019թ.
Ժամը՝ 09:30

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Ներսիսյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Մուրադյան /գնահատող/, Մ. Մալխասյան /գնահատող/, Հ. Փափազյան /բացող/, Լ. Ղարիբյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Եղիազարյան

1.Անհամապատասխանությունը շտկելու մասին

(Ս. Ներսիսյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ Արմեն Ցլիկյան Ա/Ձ-ի կողմից հրավերով սահմանված ժամկետում շտկվել են հայտում առկա անհամապատասխանությունները և գնահատող հանձնաժողովի կողմից մասնակցի հայտը գնահատվել է բավարար:

1.2 ԿՌ Պրոջեկտս ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է շտկված գնային առաջարկ, սակայն գնահատող հանձնաժողովի կողմից որոշվեց շտկումը չքննարկել՝ հաշվի առնելով 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

2. «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/222» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Ս. Ներսիսյան)

Հանձնաժողովը որոշեց հաստատել գնանշման հարցում գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքները.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
«Գրանդ Քենդի» ՍՊԸ	Բավարար
Արմեն Ցլիկյան Ա/Ձ	Բավարար
ԿՌ Պրոջեկտս ՍՊԸ	Անբավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

3. «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/222» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի որոշման մասին

(Ս. Ներսիսյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունած որոշումը՝ **«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/222»** ծածկագրով գնանշման հարցում ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել «Գրանդ Քենդի» ՍՊԸ–ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. Գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ս. Ներսիսյան)

4.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 3-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետը՝

Երևանի քաղաքապետարանի կարիքների համար **ամանորյա տոների կապակցությամբ երեխաներին քաղցրավենիքի նվեր փաթեթների** ձեռքբերման պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել վերը նշված մասնակցին:

4.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետը հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և սահմանել անգործության ժամկետ հինգ օրացուցային օր:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ս. Ներսիսյան

Անդամներ՝ ---------- Մ. Մալխասյան

---------- Ա. Մուրադյան

---------- Լ. Ղարիբյան

---------- Հ. Փափազյան

Քարտուղար՝ ---------- Ս. Եղիազարյան